

Կրթական փոխանակումների և համագործակցության համաձայնագիր

ք. Երևան

«15» դեկտեմբեր 2015թ.

«Տնտեսագիտության և կառավարման ոլորտի ուսանողների և երիտասարդ մասնագետների «ԱՅՍԵԿ ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, իրավաբանական հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Ազատության պող., 24Ա, ի դեմս տնօրեն **Ասյա Խալաթյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կազմակերպություն, մի կողմից, ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ը, իրավաբանական հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Րաֆֆու 57, ի դեմս տնօրեն **Աշոտ Բլեյանի**, այսուհետ՝ Ընկերություն, մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

- 1.1. Սույն համաձայնագրով Կազմակերպությունը պարտավորվում է Ընկերության հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունը, իսկ Ընկերությունը պարտավորվում է Կազմակերպությանը տրամադրել տարածք Ընկերության ներսում համապատասխան աշխատանքներ կատարելու համար:
- 1.2. Կազմակերպությունը պարտավորվում է ապահովել Ընկերության 7 աշակերտի (այսուհետ «Մասնակից»), մասնակցությունը միջազգային փոխանակման ծրագրի (այսուհետ «Ծրագիր»), անվճար հիմունքներով:
- 1.3. Ծառայությունը մատուցված է համարվում Մասնակցի և Կազմակերպության միջև համաձայնագրի ստորագրման պահից:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները.

- 2.1. Ընկերությունը իրավունք ունի՝
 - 2.1.1. Ծանոթանալ Կազմակերպության «Միջազգային փոխանակման ծրագրերին», ինչպես նաև դրանց անցկացման ընթացակարգին:

- 2.1.2. Օգտվել Կազմակերպության կողմից առաջարկվող ծրագրերից:
- 2.1.3. Տարեկան թվով 7 Մասնակցի ուղարկել արտագնա մշակութային փոխանակման ծրագրի անվճար:
- 2.1.4. Կազմակերպության կողմից սույն համաձայնագրի 2.4 կետով սահմանված որևէ պարտավորություն չկատարելու դեպքում դադարեցնել համաձայնագիրը:

- 2.2. Ընկերությունը պարտավորվում է`
 - 2.2.1. Տարածք տրամադրել Կազմակերպությանը Ընկերության ներսում:
 - 2.2.2. Կազմակերպության միջոցով տարեկան թվով 7 Մասնակցի ուղարկել արտագնա մշակութային փոխանակման ծրագրի:

- 2.3. Կազմակերպությունը իրավունք ունի`
 - 2.3.1. Ընկերության կողմից սույն Համաձայնագրի 2.2 կետի ենթակետերում նշված պարտավորություններից որևէ մեկը չկատարելու դեպքում դադարեցնել աշխատանքային գործընթացը:
 - 2.3.2. Ընտրելու թվով 7 Մասնակիցներին` հարցազրույցի միջոցով:
 - 2.3.3. Ծավալել աշխատանքային գործունեություն Ընկերության տրամադրած տարածքում համաձայնագրի ստորագրաման պահից:

- 2.4. Կազմակերպությունը պարտավորվում է`
 - 2.4.1. Ընկերությանը ներկայացնել արտասահմանում տեղի ունեցող բոլոր ծրագրերը:
 - 2.4.2. Ընկերության տվյալները ներմուծել Կազմակերպությանը պատկանող վիրտուալ համացանցային համակարգի տվյալների բազա:
 - 2.4.3. Ընկերությանը պարբերաբար տեղեկացնել Ծրագրերի գործընթացի մասին:
 - 2.4.4. Ընկերությանը ներկայացնել լրացուցիչ տեղեկատվություն կապված Ծրագրերի իրականացման հետ առաջին իսկ պահանջի դեպքում:

3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

3.1. Սույն համաձայնագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն համաձայնագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 2 (երկու) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել համաձայնագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

4. Վեճերի լուծման կարգը

- 4.1. Կողմերի միջև առաջացած բոլոր տեսակի վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով՝ հաշվի առնելով Կազմակերպության կողմից սահմանված Կանոնակարգը:
- 4.2. Եթե վեճերը չեն կարգավորվում սահմանված Կանոնակարգի համաձայն, ապա դրանք լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Եզրափակիչ դրույթներ

- 5.1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:
- 5.2. Համաձայնագրի գործողության ժամկետը կարող է երկարացվել կողմերի փոխադարձ համաձայնության դեպքում:
- 5.3. Մինչև սույն Համաձայնագրի կնքումը կողմերի միջև եղած բոլոր տեսակի գրավոր կամ բանավոր պայմանավորվածությունները համարվում են առոչինչ:
- 5.4. Համաձայնագիրը կարող է ժամկետից շուտ դադարեցվել, եթե կողմերից յուրաքանչյուրը մեկ ամիս առաջ հիմնավորված կերպով այդ մասին մյուս կողմին գրավոր տեղեկացնում է և այն փոխադարձաբար ընդունվում է:

- 5.5. Սույն համաձայնագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:
- 5.6. Սույն համաձայնագիրը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր կողմին:

**6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները
և ստորագրությունները**

<p align="center">ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ</p>	<p align="center">«Տնտեսագիտության և կառավարման ոլորտի ուսանողների և երիտասարդ մասնագետների «ԱՅՍԵԿ» ասոցիացիա» հասարակական կազմակերպություն</p>
<p>(անվանումը)</p>	<p>(անվանումը)</p>
<p>ք. Երևան, Ռաֆֆու 57 հեռախոս 091 43 10 99, 010 74 72 46</p>	<p>ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն համայնք, Ազատության 24^ա, (+37455) 62 38 40</p>
<p>(հասցե, հեռախոս)</p>	<p>(հասցե, հեռախոս)</p>
<p>01804186</p>	<p>02517501</p>
<p>(ՀՎՀՀ)</p>	<p>(ՀՎՀՀ)</p>
<p align="center">Հայէկոնոմբանկ, Մետաքս մ/ձ 163218137665</p>	<p align="center">Կոնվերս Բանկ, 1930002752250100</p>
<p>(ՀՀ)</p>	<p>(ՀՀ)</p>
<p align="center">Արտուր Բլեխան _____ (տնօրեն) (ստորագրություն)</p> 	<p align="center">Ալյա Խալաթյան (նախագահ) (ստորագրություն)</p> 